

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
վիճակագրության պետական խորհրդի նիստի

29.07.2013թ.

Ժ.11: 00

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Գավթյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ):

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ա.Մանանդյան (ներքին աուդիտի վարչության պետ):

Օրակարգի նախագծում՝ երկու հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Լ.Պետրոսյան/

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Լ.Պետրոսյան/

Որոշեցին՝

2013 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հավելված 3-ի 3-րդ՝ «Մամուլի հաղորդագրություններ» բաժնի 1-ին տողի «հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 20-րդ օրը (2012 թվականի դեկտեմբերը՝ հունվարի 25-ին)» բառերը փոխարինել «հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 20-րդ օրը (2012 թվականի դեկտեմբերը՝ հունվարի 25-ին, իսկ 2013 թվականի հուլիսինը՝ օգոստոսի 21-ին)» բառերով:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԶԱՐՏՈՒՂԱՐ

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ